«ԿՈՎԿԱՍ» ՀԱՅԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԴԱՀԼՆ։

Դ Ա Շ Ն.

'Ի մէկն սեպտեմբերի 1846 ամի։

Մեք 'ի ներքոյ սորին ստորագրեալքս Կանդիտատ Յակոբ Նիկիտիչ Արզանեանց և Կոլէժսկի ըէգիստրատոր Յակոբ Գէորգեան Կարենեանց կազեցաք 'ի միջի մերում զայս դաշնադրութիւն վասն տպագրելոյ 'ի Տփխիս յառաջիկայ 1847 ամն զՀայերէն լրագիր Կովկաս անուանեալ հետագայ պայմանաւք։

Ա. Լրագիրս այս ըստ հրատարակեալ յայտարարական թղթոյ պարտի տպագրիլ 'ի չաբաթն մի թերթ, ի վերայ մաքուր թղթոյ, տարեկան գինն պարտի մնալ նոյն. այն է առանց գնոյ առաքման եօթն մանէթ. իսկ առաքմամբ յայլ քաղաքս և հասուցմամբ 'ի տունս եօթն մանէթ և կէս։

Բ. Զգինս բաժանեալ լրագրոց պարտիմք ստանալ մեք երկոքեանս և մուծանել 'ի մի ժապաւինեալ տետրակ. կնքեալ կնքով մեր երեկոցունցս. և ապա 'ի նոյն իսկ մատենի 'ի միւս երեսն գրել զծախսն։

Գ. Ստացեալ դրամք և հաշուեմատեանն պարտի պահպանիլ առ երկրորդն 'ի մէնջ, այնպէս զի նա 'ի վախճան իւրաքանչիւր չորից ամսոց առաջի արասցէ զայն 'ի տես առաջնոյն։

Դ. Զամենայն ծախսս վերաբերեալս առ լրագիրն, զորօրինակ զգին տպագրութեան, զվարձ սրբագրութեան, զգին թղթոց տպագրելի լրագրոց, զվարձ առաքման լրագրոց և մասնաւոր նամակաց վերաբերելոց առ լրագիրն, զվարձ գրագրի և տեղեկի, ուր զետեղելոց է գրագրանոց լրագրին, զծախս հասարակ թղթոց վասն գրագրութեանց և զայլ ամենայն ծախսն պարտիմք վճարել 'ի գումարաց, ստացելոց 'ի բաժանեալ լրագրաց։

Ե. Զկնի վճարելոյ զամենայն ծախսն եթէ ինչ յաւելցի զայն բաժանելոց ենք յերկուս հաւասար մասունս, յորոց զմի մասն ստանալոց է առաջինն 'ի մէնջ և զմիւս հաւասար մասն

երկրորդն. իսկ եթէ մուտք ոչ հաւասարեսցին ծախուց յայնոսիկ ազգական պարտիմք լրացուցանել մեք երկոքեանքս, նոյնպէս կիսովի։

Զ. Զամենայն տպագրելի նիւթս թէ զշարադրեալս և թէ զթարգմանեալս 'ի մէնջ, և թէ զատացեալս յայլոց պարտիմք ընթեռնուլ 'ի միասին և միաձայն խորհրդով զաւելորդսն յաւելեալ և զթերին լրացուցեալ ապա տալ 'ի տպագրութիւն։

Է. Մեք երկոքեանս աննախանձաբար և անձանձիր պարտիմք հետևիլ 'ի շարադրութեան և 'ի թարգմանութեան արժանաւոր նիւթոց, որպէս զի օր քան զօր լրագիրն յառաջադէմ ծաղկեսցի, և ընթերցողքն դոցեն բաւականութիւն, և բաց յառանձին պարապմանց յիւրաքանչիւր աւուր զկնի կէսաւուր ժամս երկուս պարտիմք 'ի միասին ժողովիլ 'ի յատկացեալ գրադրանոց մեր և պարապիլ 'ի նոր շարադրածս կամ ընթեռնուլ զպատրաստի եղեալ նիւթս. իսկ յատկական պարտաւորութիւն առաջնոյն 'ի մէնջ եղիցի ընտրողաբար թարգմանութիւն ներքին և արտաքին լրոց. բայց նոր շարադրածք կամ թարգմանութիւնք այլ և այլ նիւթոց ոտանաւորք, պատմարանական և ազգային տեղեկութիւնք բանաստեղծութիւնք և սրբագրութիւնք յայլոց ընկալեալ նոյնօրինակ առարկայից դնին 'ի պարտաւորութիւն երկրորդին։

Ը. Զվերջին սրբագրութիւն տպագրեալ լրագրոց պարտիմք առնել կարգաւ. այն է զամիսս երկուս առաջինն 'ի մէնջ պարապեսցի 'ի նոյն և զամիսս երկուս վերջինն։

Թ. Ամենայն տպագրելի նիւթք մուծցին 'ի տիպ միաձայն հաւանութեամբ միմեանց. իսկ նիւթք՝ որք անկանին ընդ կասկածանաք և ի վերայ որոց ոչ լինիցի միաձայն հաւանութիւն մի տպագրեսցին։

Ժ. Եթէ ուրևիցէ առաքեսցին 'ի ձեռն մեր յերկոցունցս 'ի մէնջ լրագիրք և գինք նոցա մատնեսցին 'ի կորուստ և առ այն զոն յայտնի ապացոյցք, յայնժամ 'ի գին այնոցիկ ոչ պահանջեսցի ինչ ի միամէ ընկերէ։

ԺԱ. Ամենայն ներգործութիւնք վերաբերեալք առ լրագիրն Կովկաս պարտին լինիլ խորհրդով մեր երկոցունցս և ոչ մին 'ի մէնջ առանց միւսոյն տնօրինեսցէ ինչ։

ԺԲ. 'Ի դէպս ինչ հիւանդութեան կամ սակաւօրեայ բացակայութեան միւսմ 'ի մէնջ զբոլոր պարտաւորութիւնն պարտի կատարել միւսն առանց իրիք պահանջմանց. իսկ եթէ պա-

տահեսցի անհրաժեշտ առիթ բացակայութեան միում 'ի մէնջ առաւել քան զմի ամիս. յայնդէպս նա զիւրն պարտաւորութիւն կարէ յանձնել այլում. որ կարօղ իցէ իսկութեամբ կատարել զվերոյգրեալ պայմանս։

ԺԴ. Եթէ ոք 'ի մէնջ ժխտեսցէ այսր դաշին ցվախճան առաջիկայ 1847 ամի. նա ըստ դատողութեան չորից բարեմիտ անձանց ընտրելոց յերկուց կողմանց հատուսցէ միւսոյն զվնասն և բաց յայնմանէ 'ի տոյժ իւրում ընկերի զհարիւր ոսկիս Հոլլանդիոյ։ Եւ

ԺԴ. Այս դաշն պարտի գրել յերկուս օրինակս և մի մի ի նոցանէ ստորագրութեամբ երկոցունցս և վկայութեամբ ստորագրեալ անձանց պարտի մնալ առ իւրաքանչիւր 'ի մէնջ. և այս դաշն պարտի յերկուց կողմանց պահպանիլ սուրբ և անխախտելի։

Յակոբ Արզանեանց.

Յակոբ Կարինեանց

այսմ դաշին վկայեմք Մովսէս աւագ քահանայ Սայաթնեանց
Միրաքեանց.

Կօլլէժսկի րեգիստրատօր Խաչ. Առվանեանց

Այս դաշն յայտնեցաւ արժանապատիւ Գաբրիէլ քահանայի Պատկանեանց, և ինքն համաձայնեցաւ լինել մեզ գործակից ըստ վերոյգրեալ դաշանց, վասն որոյ և մեք համաձայնեցաք ընդունել զնա մեզ գործակից, և ուր գրեալ եմք երկու ընկեր այժմ պարտի ընթերցեալ լինել երեք, որում համաձայն եմք

Յ. Կարինեանց

Յ. Արզանեանց

Այսմ դաշնագրութեան համաձայն եմ և ստորագրեմ
Գաբրիէլ քահանայ Պատկանեանց